ՄԳՏԿ անդամ պետությունների կառավարիչների հանձնաժողովի նստաշրջան Մոսկվայում /2008 թ. դեկտեմբերի 11/

2008 թվականի դեկտեմբերի 11-ին ՌԴ Մոսկվա քաղաքում տեղի ունեցավ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) անդամ պետությունների կառավարիչների խորհրդի 47-րդ նստաշրջանը, որին մասնակցելու նպատակով դեկտեմբերի 9-12-ը եռօրյա այցով Մոսկվա էր մեկնել ՄԳՏԿ-ում կոորդինացիոն կոմիտեի անդամ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը:

Նստաշրջանին մասնակցում էին ՄԳՏԿ անդամ կողմերի՝ Կանադայի, Եվրոմիության, Ճապոնիայի, Կորեայի, Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Նորվեգիայի, Հայաստանի Հանրապետության, Բելոռուսիայի, Ղազախստանի, Ղրղզստանի եվ Տաջիկստանի ներկայացուցիչները:

Օրակարգային հիմնական հարցերից էր ծրագրերի ֆինանսավորման վերջնական աղյուսակի հաստատումը: ՄԳՏԿ հաստատեց 19 նոր ծրագիր՝ 1.6 մլն ԱՄՆ դոլար եւ 3.8մլն Եվրո ընդհանուր արժողությամբ՝ ՌԴ-ից, ՀՀ-ից, Բելոռուսիայից, Ղազախստանից, Վրաստանից, Ղրղզստանից, Տաջիկստանից ներկայացրած ծրագրերը ֆինանսավորելու նպատակով:

Հայաստանից ֆինանսավորման ներկայացված ծրագրերից հավանության արժանացան 3-ը՝

N	Գիտական կազմակերպությունը	ֆինանսավորման չափը
A 1662	Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտ	300.000 ԱՄՆ դոլար
A 1677	«Կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	450. 000 եվրո
A 1695	ԵՊՃՀ	310. 000 եվրո

Հաջորդ ֆինանսական կիսամյակում քննարկելու համար նախագծերի ներկայացման վերջնաժամկետ նշանակվեց 2009 թվականի հունվարի 30-ը:

Խորհրդի անդամները հավաստեցին, որ ՄԳՏԿ-ն իրագործել է նախկին ԽՍՀՄ պետությունների գիտական հանրությանն աջակցելու իր ծրագիրը: Որոշվեց այսուհետ կենտրոնի գործունեությունն ուղղել գիտատեխնիկական բնագավառում առավել գլոբալ նպատակներ իրականացնելուն: Այս հարցի քննարկումը հետաձգվեց մինչեւ հաջորդ նստաշրջան:

Քննարկվեցին նաեւ առաջարկներ կապված ծրագրային նոր մոտեցումների, համաֆինանսավորման մեխանիզմների, ծրագրերի մշակման արդյունավետությունը բարձրացնելու հետ:

Հաստատվեցին 2009 թ. վարչական բյուջեն եւ 2009 թ. կենտրոնի լրացուցիչ բյուջեի շրջանակներում ծրագրային գործունեության նախագծերը, կողմերի անհատական ու ընդհանուր ներդրումների ծավալները :

Խորհուրդը քննարկեց նաեւ անդամ պետությունների ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կառույցների մասնակցությամբ ծրագրերի եւ նախագծերի համաֆինանսավորման խնդիրները: Ընդգծվեց համաֆինանսավորման վերաբերյալ համաձայնագրերի արագ կնքման անհրաժեշտությունը: Նման համաձայնագրեր կնքելու առաջարկություններ ստացան Ռուսաստանի Դաշնությունը, Հայաստանի Հանրապետությունը, Ղրղզստանը եւ Բելառուսիան

Քննարկվեցին նաեւ դեղամիջոցներ վերամշակելու, «Գիտելիքը եւ տեխնոլոգիան կենսաբանական ահաբեկչության դեմ» նպատակային ծրագրերը: Վերջինիս նպատակը նորագույն մեթոդների եւ տեխնոլոգիաների ստեղծումն է, ինչը հնարավորություն կտա հայտնաբերել եւ արագ արձագանքել՝ էպիդեմիոլոգիական անալիզի ենթարկել առավել վտանգավոր միկրոօրգանիզմները:

Հաջորդ նստաշրջանը պլանավորվեց անցկացնել Մոսկվայում 2009 թվականի մարտի 26-27-ը:

Մոսկվա իր այցելության ընթացքում ՀՀ ԳՊԿ նախագահը հանդիպում է ունեցել ՄԳՏԿ-ի ղեկավար Ա. Վան-Դեր-վիլի հետ: Հանդիպման ընթաքում քննարկվել է ՀՀ –ում 2009 թվականի ապրիլ ամսին գիտելիքի առեւտրայնացման եւ արդյունավետ բիզնես ծրագրեր կազմելու թեմաներով գիտաժողով կազմակերպելու հարցը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել տարեկան 10 մարդ գործուղել ՄԳՏԿ կողմից կազմակերպվող դասընթացներին մասնակցելու համար: Առաջարկություն է եղել ՀՀ-ում ՄԳՏԿ գրասենյակի լիազորություններն ընդլայնել՝ հնարավորություն ընձեռել բիզնես ծրագրեր գրելու վերաբերյալ դասընթացներ կազմակերպելու համար:

Ս. Հարությունյանը պարոն Վան-Դեր-վիլին է ներկայացրել նաեւ «Գիտության պետական հիմնադրամ» ստեղծելու ՀՀ կառավարության պատրաստակամության մասին: